



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

638.232
իւ-17

ԵՐ-ԶՈՒԾԼ ԿԱՅԵՆ

Գ. ԽՈԼՈՅՑԱՆ

ԹՓԱՅԻՆ ԹԹԱՍԱՆԻ
Մ Շ Ա Կ Ո Ւ Մ Է

OCT 2010

ԱՐԵՎԱՆ ԶՈՒԾՎԱԿԱՆ

638.232

Խ-17

աշ

Գ. ԿԱԼՈԹՅԱՆ

ԹՓԱՅՏՆ ԹԹԱՍԱՆԻ
ՄՇԱԿԱԿԱՐԸ

1739

06 MAY 2013

23.224

ԹՓԱՅԻՆ ԹԹԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Թթագործության մեջ ալժմ դրված ամենակարեվոր խնդիրներից մեկը հանդիսանում է գտնել թթաստանների մի այնպիսի սիստեմ, զոր մի միավոր տարածությունից տա մեծ քանակությամբ թթենու տերեվ առանց իշեցնելու նրա վորակը։ Բարձրաբուն թթենիներին ձեվ տալու և նրանցից բերք ստանալու համար, պահանջվում է առնվազն 6—7 տարիներ, վորից հետո միայն նարավոր ել լինում ողտագործել նրանց տերեվը կերի համար։ Բացի արդ նման սիստեմի թթենիներից ստացվում է չնչին քանակությամբ բերք։

Բավական ե հիշել, վոր տասը տարեկան թթենին միջին թվով տալիս ե տարեկան միայն 10—15 կիլո տերեվ, մինչդեռ 15 հատ թփային թթենիներ 15 կիլո տերեւ տալիս են 2—3 տարում։

Եեթե ընդունենք, վոր մի հեկտար հողամասի վրա տնկված ե քառակուսի ձեվով 277 քարձըրաբուն թթենի, հաշվելով յուրաքանչյուր քառակուսի կողմը 6 մետր, և ընդունելով, վոր տասը տարեկան ծառը տարեկան կարող ե տալ 15



Դասընթաց. № 6651 (ը) Դասընթաց. № 8837 Տիրաժ 2000

Գետիքատի տպարան, Եկեղեց

3

Թփային թթաստ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅԱ ԲԻBLIOGRAPHԻԱ

Ա. Խաչիկիսան

15794 - 62

կիլո տերեվ, մեկ հեկտարից կստացվի 4156 կիլո տերեվ, մինչդեռ մեկ հեկտար թփալին թթաստանից, իր ոգտագործման 3-րդ տարին ստացվում է 20.000 կիլո, այն ել ահնալիսի տերեվ, վորը լուր վորակով հետ չի մնում բարձրաբուն թթենու տերեվից: Ուրեմն մեկ միավոր թփալին թթաստանից ստացվում է շատ ավելի տերեվ քան բարձրաբունից առանց իջեցնելու նրա վորակը:

Այստեղից պարզ է, թե ինչու նպաստակահարմար է կողմանտեսություններում, խորհանտեսություններում և չքավոր միջակ անհատ տնտեսություններում ունենալ թփալին թթաստաններ շերամապահությանը զարկ տալու համար:

Թփալին թթաստանի 2-րդ առավելությունն ել այն ե, վոր աճեցնելու և ձեվ տալու համար անարդյունավետ տարիներ չունի, տնկելու 2—րդ տարին թթաստանը արդեն ոգտագործվում է:

3-րդ առավելությունն այն ե, վոր կըտրված ճրուղի և տերեվի հարաբերությունը մեկ և մեկ ե, այսինքն մեկ միավոր տերեվին ընկնում է մեկ միավոր ճյուղ, մինչդեռ բարձրաբուն թթենու գեղքում մեկ միավոր տերեվին ընկնում է 2 միավոր ճյուղ:

Վերջապես թփալին թթաստանի ամենակարեվոր առավելությունն այն ե, վոր այդ սիստեմն հնարավորություն և տալիս մեքենայա-

ցընելու մի շարք աշխատանքներ, վորոնցից ամենակարեվորը տերեվի բերքհավաքը, կատարվում է մեքենայով:

Վերոհիշյալ առավելությունները բավական են համոզելու, վոր բարձրաբուն թթաստանից պետք է անցնել թփալին թթաստանին և վերջինս դարձնել կոլանտեսությունների, խորհանտեսությունների և չքավոր միջակ անհատ տնտեսությունների սեփականությունն ու խնամքի առարկան, մանավանդ նկատի ունենալով շերամապահության սոցիալիստական և մեքենայացման ուղիներով զարգացող արագ տեմպը:

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ. — Թփալին թթաստանին հատկացված հողը պետք է լինի թեթեվ, փխրուն և պարարտ, հողամասը լավ լուսավորված, արեվոտ և վոռողման համար ունենա առատ ջուր. վոռոգելիս ջուրը համահավասար տարածվելու համար պետք է լինի նաև հարթ: Վորպեսզի տնկիներն ունենան խորը գնացող ուժեղ արմատային սիստեմ, անհրաժեշտ է հողի մշակման աշխատանքները կատարել ժամանակին, ցանկալի ֆիզիքական կազմության և քիմիական բաղադրություններ ստեղծելու համար:

Կանոնավոր և ուղիղ մշակման դեպքում, ոգը, ջերմությունը և խոնավությունը ազատ թափանցում են հողի ներքին շերտերը և միկրո-

որդանիզմերի աշխատանքի համար ստեղծում
են նպաստավոր պայմաններ։ Այդ որդանիզմների
շնորհիչ հողը , հասունանում , և և մեծանում է
նրա բերրիությունը։

Վերջիններիս ոգնությամբ հողում գաճափող
որդանական նյութերը քայլալիքների, վեր ևն ած-
վում հանքային աղերի, վորոնք բույսերի մնացա-
ռության կարեփոր նյութերն են։ Այս ձեզով որ-
դանական նյութերը քայլալիքների ու
ընդունելի են գանձում բույսի համար։ Ցույսի
հետագա զարգացման համար մեծ նշանակություն
ունի վաղ վարը, վորի շնորհիվ հողում պահպան-
վում ե անհրաժեշտ խոնավություն և տնկիներն
ամուսն չոր ամիսներին ապահով են լինում ջրով։

Հողը վաղ աշնանը վարելով, միաժամանակ
արմատախիլ են արգում մոլախոտերը և նրանց
արմատներն ու կոճղարմատները դուրս ընկնելով
հողի լերեսը ցրտահարվում են, չորանով, և հե-
տագալում քայլալիքում։

Ուրեմն աշնան վարը նպաստում է թե խո-
նավության կուտակմանը և թե բուսական մնա-
ցորդների քայլայմանը, վորի հետեւյանքով ավե-
լանում է հողի բերրիությունը։

Այս բոլորից պարզ լերեփում ե, թե ինչքան
խոշոր նշանակություն ունի և անհրաժեշտ
աշնան վարը։

Աշնանը, հողը պետք է վարել 30—40 սմ.
խորությամբ։

Վարնանը, ձլունը հալվելուց հետո, լերը հողը
քեշին ե գալիս, նորից պետք է կրկնավարել
բայց այս անգամ արդեն չերեսանց մոտ 15—20 սմ.
խորությամբ, վորովիճակի ավելի խորը վարելու
դեպքում կլորչի այն խոնավությունը, վոր կու-
տակվել եր ձմռան ընթացքում։

Գարնան վարի նպատակն է հողից փըխ-
րացնել, նոր ծլած մոլախոտերը արմատախիլ
անել և վոչնչանցել։ Հողի վարելուց առաջացած
խոշոր կոշտերը մանրելու և մոլախոտերի մնա-
ցորդները դաշտից դուրս հանելու համար ան-
հրաժեշտ է փոցխել զիգզագ փոցխով։

Փոցխելուց հետո մոլախոտերի մանր մնա-
ցորդները ձեռքով պետք է հավաքել, դուրս տա-
նել հողամասից և ալիքել։ Յեթե հողը հարուստ ե
մանր խճերով, անպայման անհրաժեշտ է մաքրել
Այդ աշխատանքները կատարելուց հետո ամբողջ
հողը պետք է հարթել, վորպեսզի վոռողոյ ջուրը
հավասար տարածվի ամբողջ դաշտում։ Տնկելուց
առաջ, հողամասը պետք է կանոնավոր պլանի-
քովկայի լենթարկել, վորպեսզի շղթվարանա մե-
րենավի միջոցով կատարվող տնկելունավագը։


Ամբողջ թթաստանը անհրաժեշտ է բաժանել
կվարտաների։ Այդ կվարտաների միջև պետք ե

բացել ճանապարհներ հավաքած տերեվը և մեռենաները փոխադրելու համար:

Յերկու հիմնական ճանապարհները, վորսնք թթաստանը կարում են յերկարությամբ և լաշնությամբ, կարող են ունենալ 4—5 մետր լայնություն, իսկ մնացած ճանապարհները 3 մետր:

Տնկելուց առաջ հողը պետք է պարագացնել գոմաղբով: Հեկտարին պետք է տալ 20.000-30.000 կիլո լավ հասունացած գոմաղբ: Յեթե հողը սննդանյութերից ազքատ չե, կարելի ին պարարտանյութը պակաս տալ:

ԻՆՉՊԵՍ ՏՆԿԵԼ ԹԹԱՆԻՆԵՐԸ. — Հաղամասը



Թփային թթաստանի ընդհանուր տեսքը:

Վերոհիշված ձևով պատրաստելուց հետո պետք է անցնել տնկելու աշխատանքներին:


Թփային թթաստանների դեպքում մեկ հեկ-

տարին տնկում են 20.000 տունկ, ուրեմն մեկ քառակուսի մետրին ընկնում ե 2 տունկ:

Տնկելիս շարք շարքեց պետք ե լինի մեկ մետր հեռավորության վրա, իսկ տունկը տնկից 0, 5 մետրի վրա:

Վորակեսդի թփերը հավասարաչափ լուսավորություն, շերմություն, և մնունդ ստանան, բացի ալդ, հետագա խնամքն ու տերեվահավաքը հնարավոր լինի մեքենայացման ինթարկել, անհրաժեշտ է անկել ուղիղ շարքերով:

ՇՈՐՑԵՐ ԳԾԵԼԸ ՅԵՎ ՏՆԿԵԼԸ. — Շարքերը կարելի են գծել մարկորով կամ պարանով:



Մարկը:

Յեթե թթաստանի տարածությունը մեծ ե, շարքերը քաշում են մարկորով: Մարկորը մի փակտ է մեկ ու կիսից 3 մետր յերկարությամբ

և 15 — 20 մմ. հաստությամբ։ Այդ վայտից ամրապնած են և ինում են գեղի ցած 2-3 մատեր, վրանք իրարից մեկ մետր հեռավորության վրա լեն գտնվում։ Մատերի լերկարությունը կարող է լինել մեկ մետր, իսկ հաստությունը 8-10 մմ։ Մատերը սրածայր են։ Փայտի հետեւի կողմից ամրացած են լերկու փոքր ձողեր, վորոնցից բանվորը բռնում է մարկորը, աշխատելու ժամանակ։ Մարկորին լծում են մեկ ձի։

Այս գործիքով հողի վրա քաշում են գծեր։


Վերջիններս պետք է քաշել հողամասի վոստովման տեսակետից հարմար ուղղությամբ։ Դաշտը մարկորով գծելու համար սկզբում հողի մի կողմից ձգում են պարան։ Դրան դուգահեռ մարկորով գծում են ակոսներ։ Հետագա դուգահեռ ակոսներ գծելու համար պարանի գործածությունը անհրաժեշտ չե։

Յերբ մարկորը հասնում է դաշտի ծալիքն, վերադառնալիս, մարկորի մի մատը գցում են տուածին անգամ նույն մարկորով քաշած ամենածալի ակոսի մեջ և քաշում առաջ։ Այսպես աստիճանաբար ստացվում են մեկը մյուսից հավասար հեռավորության վրա դաշնվող դուգահեռ շարքեր։

Մեկ մետր հեռավորությամբ շարքեր քաշելուց հետո պետք է անկել։

Տնկել կարելի է բահով կամ սրածալը բիռով (ձողով)։ Տնկելիս պետք է աշխատեն լերկու բանվոր միասին։

Բանվորներից մեկը ճեղքում է հողը և կամ փոս փորում, իսկ լերկը դնում է տունկը, նեաեվելով, վոր արմատը ուղիղ մտնի հողում և չկորանա աղեղի նման, վորովհետեւ թեքված արմատ ունեցող տնկիների աճեցողությունը ընթանում է զանդադ։ Նույն լերկորդ բանվորը տունկի արմատները ծածկում է փխրացրած հո-




Պարանի սկզբությամբ տնկելը։

զով։ Մեկ տունկ տնկելուց հետո առաջին բանվորը կես մետրանոց ձողով, առաջին տունկից չափում է և ուրեմն կես մետր հեռավորության

վրա նորից նշան եւ անում և վրա վորում: Յերկրորդ բանվորը դարձլալ տնկում եւ ու այսպես շարունակ: Փոքր հողամասերում թթենիները տընկում են պարանի ոգնությամբ հետեվյալ ձեփով: Հողի մի ծալրում ամրացնում են փայտ և կապում պարան, վերջինիս մըուս ծալրը կապում են մի ուրիշ փայտից ու ամրացնում հողի մեջ դաշտի մըուս ծալրին:

Բանվորներից մեկը դարձլալ կես մետր հեռավորության վրա, սկսած հողամասի ծալրից



Բերող տնկելը:

փոսեր եւ փորում, իսկ յերկրորդը անկում եւ և հողով ծածկում:

Մի շարքը անկելուց հետո, պարանը տեղա-

փոխում են մի մետր հեռավորության վրա ու նորից յերկու ծալրերը ամրացնելով գետնին, տընկում են յերկրորդ շարքը ու այսպես շարունակ:

Յեթե թթաստանը տնկում են առուների ափերին, ուր ամբողջ հողամասը վաղորոգ փրխեցրած չի յեղել, փորում են փոսեր մինչև 30 սմ. լայնությամբ ու խորությամբ, ապա տընկում են ահապես, վոր արմատները փոսում աղատ լինեն և վոչ խճճված:

Թե առաջին և թե յերկրորդ դեպքում պետք ե ահապես աներ, վեր արմատավիզը հողի յերեսից մի քիչ բարձր լինի: Հողի նստելու հետ մեկտեղ կնառեն նաև անկիները: Տնկելուց անմիջապես հետո շարքերի արանքով պետք ե հանել առուներ և թթաստանը ջրել: Առուները կարելի յե հանել թե բահով և թե բուկլից մեքենալով: Վերջինով հանելը նպատակահարմար ե, վորով հետեւ այս ձեվով աշխատանքը կատարվում է արագ պահանջում ե քիչ ծախտ և խնայվում ե բանվորական ուժը:

Զուրբ պետք ե բաց թողնել բարակ հոսանքով ու դանդաղ, վորպեսզի լավ ծծվի հողի մեջ:

Տնկելու ԺԱՄԱՆԱԿԸ. — Թթենիները կարելի յե անկել թե գարնանը և թե աշնանը:

Աշնան տնկելին ունի այն առավելությունը, վոր տնկելիներն ոգտագործուած են հողում կու-

տակված խոնավությունը, մինչև գարուն արա-
մատներն արդեն ամրացած են լինում և գար-
նանը թթենին շուտ բողբոջելով հնարավորու-
թյուն ե տալիս ավելի շուտ արթնացնելու շերա-
մին:

Գարնանը պետք ե տնկել այն ժամանակ,
իերը դեռ տնկիների մեջ սնունդափոխանակու-
թյունը չի սկսել, և կամ նոր ե սկսվել, այսինքն
վաղ գարնանը ապրիլի կեսերից:

Յեթե մինչև տնկելը տնկիների բողբոջներն
արդեն բացվել են և կամ տերեմներն սկսել են
դուրս վալ, տնկին լինում ե նվազ, աճեցողու-
թյունը թույլ, դրա հետեւանքով չորանում են
արմատները, հետեւաբար և ամրող տունկը:
Պետք ե տնկել վաղ, այսինքն մինչև բողբոջնե-
րի բացվելը:

Տնկելուց առաջ արմատները պետք ե մա-
քրել ավելորդ և վիրափոր մասերից ու գլխափոր
արմատը կտրել սուր սեկատորով, թողնելով 10-
15 սմ. յերկարությամբ: Սեկատորը պետք է լինի
սուր, վորպեսզի արմատները կտրելիս չտրորվի
և նոր վերքեր չառաջնան:

Նախ քան տնկելը արմատը պետք ե թրջել
կովի ազդի, կավալին հողի և ջրի շաղախի մեջ:
Պետք ե տնկել միամյա տունկի:

Յեթե տնկիները ստացվել են ավելի շուտ

քան թե հողը պատրաստ ե և միառժամանակ մը-
նալու ին առանց տնկելու, անհրաժեշտ ե պա-
հել սովորությունը և հով տեղ, վորպեսզի չչորանան կամ
չբողբոջնի:



Հ.7.

Տնկելու արմատների ավելորդ մասերի կտրելը:
ԹՓԵՐԻՆ ԶԵՎ ՏԱԼԻ. — Յերբ տունկը ար-
գեն ամրացված ե հողում, մինչև տերեմների բաց-
վելը, բունը սուր սեկատորով պետք ե կտրել՝ հո-
ղից տաս սանտիմետր բարձրության վրա, կտրե-
լիս բունը չտրորել:


Բնի այդ մասի վրա մնում են մի քանի բող-
բոյն:

Տնկելու աճեցողության ժամանակ այդ
բողբոջներից դուրս են զալիս նոր վաստեր: Այս
վաստերից պետք ե թողնել միայն 3-4 ուժեղները,

իսկ մնացածները կտրել: Այդ տարին տունկերը չպետք է ոգտագործել ալլ, թողնել, վար թե բռնը և թե վոստերն աճեն և ուժեղ զարգանան:

Տնկելուց մի տարի հետո, այսինքն հետեւյալ գարնանը թթաստանը կարելի յե ոգտագործել:

Թփալին թթաստանը սկսում են ոգտագործել յերկրորդ տարվանից: Այդ տարվա գարնանը տերեխները քաղելու հետ մեկտեղ թփին պետք է



Թփի աստիճանական ձևավորումը:

տալ իր վերջնական ձևը: Բնի վրա դուրս յեկած նախորդ տարվա վոստերը պետք է կտրել սուր սեկատորով 5-10 սմ. յերկարությամբ:

Այդ մնացած վոստերի վրա գտնվող բող-

բոշներից նույն տարին նորից դուս կդան նոր վոստեր:

Կտրելուց հետո թուփը անոգտագործելիք պետք է թողնել մեկ և կեսից յերկու ամիս շարունակ, վորպեսզի նրա գալար վոստերը ուժեղանան և տերեխակալին: Դրանից հետո արդեն տերեխը կարելի յե ոգտագործել:

Թողած ձևողերի վրա, նորից դուրս են գալիս 2—3 նոր վոստեր և թուփը ավելի ուժեղանում և ու մեծանում:

Վորպեսզի հետագայում թուփն ավելի ուժեղանա և աճեցնությունը լավ լինի, յեղած ձևողերից պետք է թունել միայն 6—8 ուժեղները; իսկ մնացածները կարառել:

Տերեխավաքը:



ԹԹԱՍՏԱՆԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒԻՄԸ. — Թփալին թթաստանը տարվա մեջ ոգտագործվում է յերկու անգամ՝ գարնանը և աշնանը: Աշնանը ոգտագործում են աշնան կերի ժամանակ, բայց այս գեպը վաշ կամ թփի ճյուղերը կարելով ան-

միայն պղկելով տերեվնենք առանց անգամ վնաս-
սելու ճշևզերին:

Աշնանը ճյուղերը կտրելիս, թուփը, նախ
հսարաւորություն չի ունենա իր նոր վոստերն
այսպէս ամրացնել, վոր դժմանա ձմռան ցրտե-
րին, յերկրորդ, գարնանը այդ նորաբույս վոս-
տերի վրա տերեվներ քիչ կլինեն:

Բույսի զարգացումը թփային թթաստանում
ընթանում է ավելի արագ քան բարձրաբնի
գեպում: Թփային թթաստանից ստացված տե-
րեվները իրենց գորակով, միանգամայն բավա-
ր են փորդի կերի համար և թուրքեստանի
ոլորտաններում, չնայած ուժեղ շողերին, վորդի
կերակրումը թփային թթաստանից ստացած տե-
րեվներով, կատարվել է միանգամայն բարեհա-
ջող, Ամռանը նրա տերեվները կարելի յե ողա-
գործել նաև յերկրորդ, - ալիսնքն ամռան կերի
համար:

ԲԵՐՔԻ ՔԱՆԱԿԻ. — Ինչուս ասացինք, թփա-
յին թթաստանի դեպքում, մեկ հեկտարին տնկում
են 20.000 տունկի: Ոգտագործման տուաշին տա-
րին մեկ տունկից ստացվում է մոտավորապես
400 գրամմ, ուրեմն մեկ հեկտար թթաստանից
8.000 կիլո տերեվ, իրկրորդ տարին մեկ թփից
ստացվում է 600-700 գրամմ, մեկ հեկտարից
1200-1400 կիլո, իսկ օգտագործման յերրորդ

տարին արդեն, մեկ հեկտար թթաստանից ստաց-
վում է 20.000 կիլո հաշվելով մեկ թփից մեկ
կիլո տերեվ:

Ընդունելով, վոր մեր պայմաններում մեկ
տուփ գրենան կերակրելու համար անհրաժեշտ է
1000 կիլո տերեվ, թփային թթաստանը հսարա-
վորություն է տալիս իր ոգտագործման առաջին
տարին պահել 8 տուփ:

| | | | | | |
|---|------|---|---|-------|---|
| » | 2-րդ | » | » | 12—14 | » |
| » | 3-րդ | » | » | 20 | » |

Իսկ յեթե ավելի ինացողաբար վերաբեր-
վենք գեպի տերեվը և մեկ տուփ գրենան կե-
րակրենք 800 կիլո տերեվով, ինչպես անում են
շատ յերկրներում, 3-րդ տարին, մեկ հեկտար
թփային թթաստանից ստացած տերեվներով կա-
րելի յե կերակրել 25 տուփ գրենա:

Այսուղից պարզ է թե վարքան ձևոնաւու ին
կոլտնտեսություններին, խորհրդանտեսություննե-
րին և չքավոր ու միջակ անհատ անտեսություններին ունենալ թփային թթաստաններ:

ԹԹԱՍՏԱՆԻ ԽՆԱՄԹՔ. — ԶԲԵԼ. — Ինչուս
վերը հիշատակեցինք, տնկելուց հետո, թթաս-
տանը անմիջապես պետք է ջրել: Թե վորքան
ջուր է հարկավոր, դա կախված է աեղի կլիմա-
բական պայմաններից, հաղի հատկությունից,
ջերմությունից և տերեվների գույքիացման

իստենսիվությունից։ Զրի խնդիրը թթագործության մեջ ունի խոշոր նշանակություն, զորովնետեւ տերեպի բերքի նախատեսմանված քանակը բացի մի շաբթ այլ պարմաններից, կտիված և նաև վուսպող ջրի նորմալ քանակից։

Թթագործների 1-ին համագումարի տվյալների համաձայն, վուսպում ըստ ժամանակի դասավորվում է հետևյալ կերպ։—

| I Տարին | | II Տարին | | III և հետ. տարիները | | | |
|---------|-----------------|--------------|-----------------|---------------------|-----------------|-----------------|-----------------|
| Ամիսներ | Քառորդան քանակը | Ամ 3 1 հեկտ. | Քառորդան քանակը | Ամ 3 1 հեկտարին | Ամ 3 1 հեկտարին | Ամ 3 1 հեկտարին | Ամ 3 1 հեկտարին |
| X | 1 | 600 | 600 | — | — | — | — |
| IV | 3 | 850 | 150 | 1150 | 1 | 850 | 850 |
| V | 2 | 150 | 800 | 1600 | 1 | 750 | 750 |
| VI | 2 | 800 | 750 | 1500 | 2 | 750 | 1500 |
| VII | 2 | 750 | 1500 | 2 | 750 | 1500 | 750 |
| VIII | 1 | 900 | 900 | 2 | 700 | 1400 | 1 |
| IX | — | — | 1 | 650 | 650 | — | — |
| Ընդ | 11 | — | 7250 | 9 | — | 6450 | 7 |
| | | | | | | | 5450 |

Հետագա տարիների թե վուսպումների թի-

վը և թե ջրի ընդհանուր քանակը մնում է նույնը, ինչ վոր Յ-րդ տարում։

Պետք ե հիշել, վոր վուսպման այս նորման և Ջրի քանակը նախատեսված է Միջին Ասիայի կիմարտկան միջին պարմաններից լենելով։ Բոլոր լերկիրների համար այս նորման որենք չեն կարող ե փոփոխման լենթարկմել ըստ կեմայական, հողային և այլն պարմանների։

Թիվային թթաստանը թե վուսպման և թե ջրի կլանման քանակի տեսակետից շատ տվելի պահանջկոտ ե քան դաշտային շտու կուլտուրաները։ Բայց թթենու գրական հատկությունը այս ե, վոր վուսպման ժամանակը ազատ կարելի իւ փոխադրել տվյալ ամսվա այս կամ այն որերին, առանց վասս պատճառելու տունկերին։

Ընդհանուր առմամբ, նայած կիմարտկան և հողային պարմաններին թթաստանը կարելի լեռ տնօսական ջրել 2-3 մագամ, իսկ շող՝ ամիսներին (հունիս, հուլիս, օգոստոս) մինչև շորս անգամ։

ՄՈԼԱԽՈՏԻ ՄԱՔՐԵԼԸ ՅԵՎ. ՀՈՂԻ ՓԽՐԱՑՆԵԼԸ

Ջրելուց հետո հողը արագությամբ կեղեվակալում ե և ծածկվում է մոլախոտերով։ Հետադարձա ամբողջ աշխատանքը կայանում է նրանում, վոր հաճախ պետք ե քաղնանել և հողը փխրացնել։

Մոլախոտերը բանելով կուլտուրական բույսների հետ, տվյալ դեպքում թթենու տնկիների հետ, վասառում են նրանց և թույլ չեն առլիս տնկիներին ազատ զարգանալու: Նրանք վերցնելով հոգից սնունդ, աղքատացնում են հողը, բացի դրանից մոլախոտերն ավելի արագ են զարգանում քանի տունկերը և զրկում են վերջնիս արեգի լույսից, ստեղծելով աճեցողության վատ պայմաններ, վորի հետեւանքով տնկիները լինում են թույլ: Մոլախոտերը չորացնում են հողը, ոդապործելով այն խոնավությունը, վորը կուտակվել եր հողում կուլտուրական բույսի համար, Նրանց դոյլությունը հարկադրում է ջրել ավելի շատ քան պահանջում ե կուլտուրական բույսը իր անմիջական կարիքների համար: Ասածներից պարզ ե, վոր մոլախոտերի գեմ պետք է մղել անհաջող պալքար: Այդ պալքարն ավելի կարեւոր ե և ունի վճռական նշանակություն չորային շրջաններում, ուր վոռոգող ջուրը, առանց այն ել չի բավարարում գլուղատնտեսության կարիքներին:

Թփալին թթաստանը ամբողջ վեգետացիալիք ընթացքում 3-4 անգամ պետք է քաղհանել: Քաղհանը պետք է կատարել մեքենայով, վորը թե արագացնում ե աշխատանքը և թե եժանացընում:

Իբրև քաղհանող մեքենաներ կարելի յե գործածել կուլտիվատորը և բուկիցը: Այս յերկուանել պետք ե աշխատեցնել ձիով:

Կուլտիվատորը իր սուր դանակներով կտրում ե միջարքերում գտնված մոլախոտերը, միաժամանակ փխրացնելով հողը:

Բուրբերի շուրջը գտնվող մոլախոտերը պետք ե քաղհանել ձեռքով—ուրագներով: Ինչպես վերը հիշատակեցինք թթաստանը ջրելուց վորոշ ժամանակ հետո հողի յերեսը կեղեվակալում ե հաստ ու պինդ շերտով: Այդ կեղեվը սկսում ե ավելի պնդանալ և ապա ճաքճելով հողում առաջանում ե բաղմաթիվ ճեղքեր: Հողի յերեսը կեղեվակալելուց հետո ողը հնարավորություն չի ունենում ներս թափանցելու և բույսը զրկվում ե իր զարգացման ամենակարեվոր պայմաններից մեկը հանդիսացող՝ ողից:

Միաժամանակ գոլորշիանում ե հողի ստորին շերտերում կրտակված խոնավությունը և չորացնելով հողը հարկադրում ե մեզ, հողամասը նորից ջրելու:

Կուլտիվատորով թթաստանը քաղհանելիս միաժամանակ փխրացվում ե հողը, թփի զարգացման համար ստեղծելով բարեհաջող պայմաններ, առաջ նրան իրեն անհրաժեշտ խոնավությունը, սնունդը և ողը:


Այսպես մշակելով հողը և խնամելով թթենիները, հնարավորություն կտանք նրանց ուժեղ զարգացնելու արմատային սիստեմը, վորով և կարճ ժամանակամիջոցում կունենանք թե վորակով լավ և թե քանակով շատ տերեւ։ Հետագա տարբիներում խնամքը նույնն է։ — Կորատել ավելորդ ճյուղերը, ջրել, մոլախոտերը մաքրել և հողը փխրացնել։

ՊԱՐԱՏԱ.ՑՈՒՄ. — Ինչպես արդեն հիշատակել ենք թփային թթաստանի գեղքում մեկ հեկտարին տնկում ենք 20,000 տունկ։ Այդ քանակությամբ տունկերը, յուրաքանչյուր տարին հողից վերցնում են մեծ քանակությամբ սննդանյութեր՝ աղոտ, ֆուֆոր և կալի աղեր, վորի հետևանքով հողը շատ կարճ ժամանակամիջցում կարող ե սննդանյութերից զրկվել և ուժասպառ լինել։ Թփերն այդ գեղքում կտան վորակով վատ և քանակով բիչ տերեւ։ Վորպես զի հողը ուժասպառ չինի, պետք ե հաճախակի պարարտացնել։ Պարարտացնել կարելի յէ թե հանքային աղերով և թե գոմաղբով, թփային թթաստանին յուրաքանչյուր տարի պետք ե տալ ինչպես հիշեցինք վերը, նայած հողին, մեկ հեկտարին 20.000-30.000 կիլո լավ հասունացած գոմաղը։

Գոմաղը կարելի լե տալ գարնանը, շաղ

տալով թթաստանի միջարքալին տարածության մեջ և ապա փորելիս հողի տակն անցկացնել, Կարելի լե տալ նաև թփերից բերքը հավաքելուց հետո։

Գոմաղը բացակայության դեպքում, պետք ե գործածել արհեստական պարարտանյութեր։



Թթաստանի պարարտացնելը։

Վորպեսզի թթաստանից ստացվող տերեւի վորակը բարձր լինի և քանակը շատ, անհրաժեշտ ե թթաստանը անպարհան պարարտացնել։

Թփային թթաստանը կարճ ժամանակամիջոցում տալիս ե մեծ քանակությամբ տերեւ։ Թթենիները թփային սիստեմով մշակելը եկատեն-

սիվ թթագործությունից ինտենսիվ ձեվին անցնելն է:

Բարձրաբուն թթաստանների հետ համեմատ, տած թփային թթաստանը ունի ինտենսիվ կուլտուրալի բոլոր հատկությունները: Թփային թթաստանը պահանջում է մեծ աշխատանք և ծախս, բայց դրա փոխարեն նա մեկ միավոր տարածությունից շատ ավելի բերք է տալիս քան բարձրաբունը:

«Յեթե առաջ գլուղացիությունը, համարքա վոչ մի ծախս չեր դնում թթենու վրա և հիշում եր նրան միայն վորդի կերի մոմենտին, յեթե առաջ գլուղացիության համար թթենու նկատմամբ միակ աշխատանքի պրոցեսը համարվում եր տերևի բերքահավաքը, այժմ, անցնելով թփային թթաստանների մշակման, գործի դրությունը միանգամայն փոխվում է: Թթագործությունը դառնում է նույնչափ պահանջկու կուլտուրա, վորչափ վորեվե շարքաներկ բուլս»:

«Վորպեսզի թփերը կարողանան առաջ արն, ինչ վոր նրանցից պահանջվում է (ոգտագործման առաջին տարին տաս տուփ գրենա պահելու համար բավարար բերք, 2-րդ տարին 20 տուփի և 3-րդ ու հետագա տարիներում 25 տուփ), միանգամայն անհրաժեշտ է իր ժամանակին կատարել ինտենսիվ բոլոր աշխատանք-

ները՝ քաղհանը, ջրելը, փխրացնելը և պարապացնելը»:

Յեթե բարձրաբուն թթաստանների դեպքում թթենիներին հատկացնում ելին վոչ թե առանձին հողամասեր, այլ միայն ճանապարհների ափերը, առուների կողերը կամ թե անհատական անտեսությունների բակերն ու մի աղնտեսության հողամասը մյուսից բաժանող հողաշերք, այժմ կառուցում ենք հատուկ թփային թթաստանների խորհրդացին տնտեսություններ և կոլտնտեսությունները հատկացնում են անպիսի հողեր, վորտեղ կորող են աճել ու զարգանալ նաև ուրիշ յեկամտաբեր կուլտուրաներ:

Այս լերեվութը պարտադբում է մեզ այնպես անել, վոր թփային թթաստանները նույնպես լինեն յեկամտաբեր, ինչպես մյուս բարձր կուլտուրաները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է պալքար մղել թփերի բարձր բերքատվության և վորակի համար:



«Ազգային գրադարան



NL0292146

23.224

ଫରେଲ୍ 20 ଖାତ.